Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-650[3]-27.10.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժը» կետով՝

«ժը) օրենքով սահմանված այլ դեպքերում:»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 1-ին կետում հստակեցնել մատնանշված թերությունների վերացման սահմանված ժամկետները:	Առաջարկությունը ընդունված չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածով արդեն կարգավորված է հարցը, իսկ <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն իրավական ակտում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնություն-ները, ներքին հակասությունները:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 6-ին կետից հետո լրացնել նոր 7-րդ և 8-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝ «7) հատուկ թույլտվության հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: 8) հատուկ թույլտվության հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի հատուկ թույլտվություն ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: